

Մայշոր (գղ. maillechort) ըստած-
ները զոր հնարեցին երկու լիոնցի գոր-
ծաւորներ, կը կազմուին պղինձէ, նի-
քէլէ և զինկէ: Հետեաբարասոնց գոր-
ծածութիւնն անպակաս ֆնասներ կու-
տայ:

1850ին հնարուած ալֆէնիտ (գղ. alfenide) ըստած դաստապրիկները
գրեթէ նոյն մայշորն են բայց քիչ մը
յաւելուածով: Պղինձ, նիքէլ, զինկ,
երկաթ և վրան արծաթի բարակ թի-
թեղ մը, այս է ահաւասիկ ասոնց բա-
ղադրութիւնը: Ալֆէնիտներն իրենց
արծաթաղօծ ըլլալուն համար նուազ
ֆնասակար ըլլալով՝ պէտք չէ որ զա-
նոնք գործածողները բոլորովին ապա-
հով և անվախ ըլլան:

Ալճէրիի մետաղէ շինուածները կը
կազմուին անագէ, կապարէ և ծարրա-
քարէ: Ասոնք ալ կասկածելի են:

Արծաթաքարէ (գղ. argyrolithe) շի-
նուած դաստապրիկներն որ սկզբան
խիստ շատ խոստացան, բայց ետքէն
խօսքերնին չպահեցին, բնալուծի մը ը-
սածին նայելով ուրիշ բան չեն բայց
եթէ խառնուող մը պղինձի և զինկի,
այսինքն ամենաթեթեւ արծաթի թի-
թեղով մը ճերմկած արուրի: Ասոնցմէ
ալ պէտք է զգուշանալ:

Անագէ դաստապրիկները ամենեւին
ֆնաս չեն տար: Առջի բերան կար-
ծուեցաւ որ թոյն պատճառելու հա-
մար բաւական զառիկ կը բովանդա-
կէին, բայց Շաուլառի փորձերէն ետքն
որ եղան 1784ին այս կարծիքս ինկաւ:
Ասոնց մէջ զառիկէն աւելի մեզի վը-
տանգաւոր երեցօղն է այն կապարն ո-
րով շատ անգամ խառնուած կ'ըլլան:

Թիքեդուէալ (գղ. plaqué) ըստած-
ները անցեալ դարէն 'ի վեր են: Ա-
սոնց բաղադրութիւնն է պղինձ վրան
արծաթի թիթեղ մ'անցուցած, որուն
թանձրութիւնը հաւասար է գրեթէ
գլխաւոր մետաղին թանձրութեանը
քսաներորդ մասին: Պէտք է վախնալ
արծաթ թիթեղին մաշիլ սկսելէն:

Կը մնայ խօսիլ արծաթէ, ոսկեղօծ
արծաթէ, ծեծուած երկաթէ և Ռիշօյց

(Ruolz) ըստած դաստապրիկներուն
վրայ:

Արծաթէ շինուածները կը բաղա-
դրին արծաթէ և պղինձէ. ըստ օրինաց
Գաղղիոյ պէտք է որ ասոնք բովան-
դակեն 950 հազարորդ արծաթի և 50
հազարորդ պղինձի: — Ոսկեղօծ արծա-
թի ըստածները ուրիշ բան չեն բայց
եթէ արծաթ որուն վրայ պատած է
առաւել կամ նուազ թանձր ոսկոյ
մաշիլ մը: — Աս երկուքին ալ անֆնա-
սակարութիւնը ամենաստոյգ է. իրենց
բաղադրութեանը մէջ մտած պղինձին
համեմատութիւնը խիստ ոչինչ է վախ-
նալու համար:

Նոյն բանն ըսելու է նաև ծեծուած
երկաթէ շինուածներուն նկատմամբ:
Այս դաստապրիկներս զորոնք ծաղրա-
լից պարծենկոտութիւն մը շատ ան-
գամ երեսի վրայ կը ձգէ չափաւորնե-
րուն տանը մէջ ամենեւին արժանի չեն
այսպիսի գէշ ընդունելութիւն մը զըտ-
նալու: Եթէ փայլուն մնալու համար
ուրիշներէն քիչ մը աւելի խնամոց
պէտք ունին, չէ՞ն հատուցաներ զայն
լիով իրենց ապահովութեամբ:

Ռիշօյց ըստածներուն նոյն բանը
պիտի ըսենք ինչ որ զուրցեցինք թի-
թեղնեալներուն: Իրենց վրայի արծա-
թէ մաշիլ վերջապէս կը փճանայ, ներ-
քին պղինձը կը տեսնուի, կը ժանդո-
տի օդ և կամ հեղուկ տեսնալով և
կրնայ խանգարել առողջութիւնը:

Չմոռնանք ուրեմն. դաստապրիկի մը
ընտրութիւնն անտարբեր բան չէ. կ'ու-
զէ, կը պահանջէ մեր ամենամեծ ուշա-
դրութիւնը:

Եգիպտոսի Ժողովրդոց, յեզուշիւ, քա-
րոց և քաղաքականութեան վրայ
համառօտ տեսութիւն:

Իրաւամբ կրնան պարծիլ Ղփտիք
իրբև սերունդք հին Եգիպտացոց, և
զԵգիպտոս իրենց հայրենիք անուանել.
Իսկ Արաբացիք այնպէս են Ղփտիքն:

րուն քով՝ ինչպէս փրանկը կելտաց կամ Գաղղիացւոց . բայց այսու տարբերութեամբ՝ որ Արաբացիք յաղթող ըլլալով յաղթեալներուն հետ ի մի ժողովուրդ չձուլուեցան , հապա անգըթութեամբ ընկճեցին զեգիպտացիս և բռնադատեցին առանձին բնակութիւն և առանձին ժողովուրդ կազմելու . այն պիտի ժողովուրդ մը որ խեղճութենէն գրեթէ անտեսանելի եղած էր : — Բայց մըշտի զարմանք կը պատճառէ մարդուս , միանգամայն և խնդութիւն , երբոր տեսնէ որ այն համայնալինջ կոտորածէն ապրեւ են այնպիսի բաներ , զորոնք երբեմն մարդս աւելի կը յարգէ քան զկեանքը . կ'ուզեմ ըսել եգիպտացւոց գրականութիւնը և անոնց գիտութիւնները : Արաբացին անգամ որ արիւն միայն կ'ուզէր տեսնել տեսաւ զասոնք և խնայեց և ապագային մեծ յոյս թողուց :

Ղփտիք ըստ մեծի մասին կը բնակին Տելլայի և Սայիտի մէջ . իրենցմէ կը սեպուին Կամբիւսէն , Աղքեսանդրէն և Պտղոմեանցմէ ետքը իրենց հետ միացող Պարսիկները և Յոյներն ալ : Ըստ միաձայն վկայութեան ճանապարհորդաց Ղփտիք թխագոյն են , ճակատին տափակ , գլուխին ասուեղ մազերով ծածկուած , աշուրնին քիչ մը գոց և անկեանց կողմերը դէպ ՚ի վեր բարձրացած , ծնօտնին բարձր , քթերնին կարճ և տափակ , բերաննին ալ տափակ ու մեծ և քթերնէն հեռու ընկած և պոկունքներով չըջապատած , մօրուքնին ցանցառ , մարմիննին ոչ շատ վայելուչ , սրունքնին կորած և , և ոտից մատուցներն լայն և երկայն :

Ղփտիներուն այժմեան սրբազան և եկեղեցական լեզուն ասկէ ութը տասը դար առաջ ժողովրդեան հասարակ լեզու էր , հին եգիպտացերէնին ռամկօրէնք՝ յոյն և արաբացի բառերով խառնուած : Ասոր երկու բարբառները որ են Մեռիտիակս և կամ Պանիտես և Սայիտես , քանի մը սրբազան գրքերու մէջ կը գտնուին , և Եւրոպացւոց ալ ծանօթացած են . իսկ պաւլոս .

քեան բարբառը լեզուագիտաց մեծ քննութեան նիւթ բացած է , և մինչև հիմա ծագմանը և կազմութեանը վրայ որոշ տեղեկութիւն չունին : Ղփտի լեզուն գլխաւոր յատկութիւններն են բառից կարճութիւնը (որոնք ըստ մեծի մասին միավանկ են) , քերականական կանոնաց պարզութիւնը , և բառերը նախադաս վանկերով հոլովելը : Ուրիշ ծանօթ լեզուաց հետ բաղդատելով աւելի եբրայերենի և եթովպայերենի հետ հին առնչութիւններ ունեցած կ'երևի . ծագումն անորոշ , ունեցած խնամութիւններն անստոյգ , կը կարծուի թէ հին Եգիպտոսի աստուած պետական իշխանութիւնը կրցեր է նոր լեզու մը հնարել իրեն ժողովրդեան համար , որուն անկցորդ ըլլալը ուրիշ ազգաց հետ՝ շատ կը փափագէր . իսկ Ղփտի այբուբենքն յունին վրայ ձևացած են , բայց հին եգիպտացերենին նշաններն ալ կ'երևան վրան :

Ղփտիք քրիստոնեայ են . իսկզբան Յունաց եկեղեցւոյն հետ միացած էին , բայց յետոյ Եւտիքական և Յակոբկաց դաւանութիւն ընդունեցան . թլփաստութիւնն ալ կ'ընդունին իբրև մաքրութեան հնարք մը , իրենց պատրիարքին ընտրութիւնը եպիսկոպոսաց և ազգին մեծերուն հաւանութեամբ կ'ըլլայ . պատրիարքը սրբոյն Մարկոսի աթոռը ժառանգելուն վրայ կը պարծի և ժողովուրդն մեծարանօք կը հնազանդի աւոր և իրեն եկեղեցական կանոնաց : Եթովպիոյ Կոնստանտինոպոլսի ընտրութիւնն ալ ինքը կ'ընէ , նոյնպէս նաև վանքերու առաջնորդացը՝ որոնք 20ի չափ են , և բոլոր քահանայք իրեն հրամանովը կը շարժին :

Բնութեամբ խորամանկ , ժուժկալ և ազահ են Ղփտիք , և վաճառականութեան մէջ յաջողակ՝ տեղւոյն առճկական վարչութեան շատ պիտանի կ'ըլլան : Ազգակցութեամբ չեն ուզեր օտարաց հետ խառնուիլ . ամուսնութենէն երեք օր առաջ զհարսը բաղանիք կը տանին , և արարողութիւնը կէս գիշերէն ետքը կը կատարուի հանդերձ պա .

տարազով: Առաւօտեան դէմ զիրենք օրհնող քահանայն կը հանէ փեսային վզէն այն խաչածէ կապը՝ զոր 'ի նշան միութեան հանդէսին ատեն անցուցեր էր:

Չկայ քրիստոնէից ընկերութիւն մը մնոտիապաշտ աւելի քան զղփտիս. երկրին պողաբերութիւնը, տղայոց ծընունդը և իրենց իշուկը սուրբ Անտոնէն կը խնդրեն. Գաբրիէլ հրեշտակապետէն նիւրսի ջուրց առատութիւնը. պաքը չլուծելու համար մեռնիլն ան դամ յանձն կ'առնեն, և բժշկին չեն հնազանդիր. հիւանդի համար նախ ըզքահանան կը կանչեն և յետոյ բժիշկը. իսկ բժշկին յանձնածը շատ հեղ ամենապարզ բան է. կշիռքին թաթերէն մէկուն մէջ զըշագիր նւետարան մը կը դնէ, մէկայլին մէջն ալ հաւատարման թանրութեամբ ջուր, և իբրեւ դեղ կը խմցնէ հիւանդին:

Եկեղեցական պաշտամունքնին կը ձևանայ քանի մը դիտերէն սաղմոսներով, և քանի մը կտոր արաբերէն աւետարանի ընթերցմամբ: Քահանայից անկարողութենէն քարոզ տալու սովորութիւնը վերցուեր է: Պատրիարքները միայն կուսական վիճակէ կ'ընտրուին. և մէկ մը ընտրածնին չեն փոխեր:

Ղփտի անունն որ ըստ Եւրոպացոց Գոթի կ'ըսուի, ըստ ոմանց վերին Եգիպտոսի Կոպտոս քաղաքին անունէն ծագած է. այլք յունական բառէ մը կը հանեն, որ քրիստոնէալ կը նշանակէ. բայց դժար էր որ ժողովուրդը այսպիսի անարգ անուանակոչութիւն մը յանձն առնուր: Իսկ բազմագոյնք Ղփտի և Եգիպտացի բառերուն մէջ հոմանունութիւն մը կը գտնան, մանաւանդ երբ առաջին Ե վանկն ալ դուրս ձգուի, որ սոսկ հօլովանշան մ'է, իսկ Քիթի, Քիպիդ և Քէպի անունը տալ Եգիպտոսի Ղփտիներուն սովորական բան է, ղաժ է:

Ղփտիներէն ետքը կու գան Արաբացիք: Ասոնց գծադրութիւնն կենդանի և նշանական է, աչուրնին ընկղմած,

զոցկեկ և կայծակնացայտ. ձևերնին անկիւնաւոր, մօրուքնին կարճ, պրակունքնին բարակ և բաց, ակունին փայլուն և գեղեցիկ, թևերնին ջղային, մարմինն երակ, զօրաւոր և պատշաճ. այսպիսի են հովուականացաղներն ալ, քաղաքականացաղներն ալ: Արաբացոցմէ մաս մը մշակութեան կը պարապին. մաս մ'ալ կը մուրանայ, ուրիշ մաս մ'ալ սովորական արհեստներ կը գործէ. մէկզի թողունք գերեզմաններն: Պէտէվիք անապատներուն մէջ ճանապարհորդաց առաջնորդութիւն կ'ընեն. Ուրաուալի ցեղը, որ Աղեքսանդրիոյ և Սիուդի միջոցը կը բանակի՝ կ'առաջնորդէ դէպի Օստիաները. Պիզաւները արևելեան անապատներուն մէջ մինչև Սինայ լեռը. Ապաուիները դէպ 'ի Նուպիա. Ավուազէմները որոնց կտրծութիւնը և ասպնջականութիւնը հռչակուած է՝ Կարմիր ծովուն շրջակայքը:

Թողով Տաճիկները, Յոյները և Հրեայները որոնց ազգային ոգին և բնաւորութիւնը քիչ շատ ամեն տեղ նոյն և շատերուն ծանօթ են՝ անցնինք Եգիպտոսի քաղաքականութեանը վրայ խօսել:

Եգիպտոս ալ դեռ իրեն դրացի աշխարհաց պէս խեղճութեան մէջ թաղուած կը մնար՝ եթէ Մէհէմմէտ Ալիին պէս փոխարքայ մը չունենար: Ասոր ատեն զգեստները կորուսին այն արևելեան լայնութիւնը և դանդաղութիւնը, փակեցը վերցուեցաւ, և շատերը սկըսան կզակնին ածիլել. այս փոփոխութիւնները որչափ ալ պզտիկ՝ բայց բաւուց փոփոխութեան մեծ նշաններ են. ալ աւելի զգալի կ'երևի և պիտի ըլլայ Եգիպտոսի զարգացումը՝ ի Գերմանիա, յԱնգլիա, և 'ի Գաղղիա Եգիպտոսի տէրութեան ծախիւք կըթուող և սորվող աշակերտաց ուսումնականութեամբ: Յետ անյաղթելի կարծեալ դժուարութեանց՝ Գահիրէի բժշկութիւնը պարզին մէջ անդամահատութեան ամփիթատորն մը բացուած է, և Գիւյ անունով հմուտ Գաղղիացի բժշկի մը



Հեծելազոր եգիպտացի.

յանձնուած. մէջէն այնպիսի կտրիճ աշակերտներ ելած են և կ'եղեն, որոնք եւրոպիոյ մէջ անգամ իրենց գիտութեանը պատիւ կ'ընեն: Կեդրոնական դպրոց¹ մ'ալ հաստատուած է, որուն մէջ 'ի Գաղղիա ուսեալ եգիպտացի երիտասարդք վարժապետութիւն կ'ընեն, որուն ղեկավարութիւնը աւելի լայնածաւալ է քան ղեւրոպացւոց Բաղմարուեստեան դպրոցներունը²: Աղեքսանդրիոյ Գահիրէին հետ միանալը հեռագրութեան թելով քիչ ատենուան բան չէ. նոյնպէս նաև Տամիադի Ռոզեդաին հետ. բոլոր ճամբաները տէրութեան մասնաւոր հոգով թափառական Արաբացւոց հարստահարութիւն.

ներէն ազատած են. և քաղաքաց հաղորդութիւնները հասարակաց կառաց միջոցով դիւրացած: Զրանցից շինութեանը և նորոգութեանը տէրութիւնը ամեն խնամք բանեցուցած է: Տելեգայի մէջ բոլոր նիւսի երկայնքը թումբերով բարձրացուցած է Մէհէմմէտ Ալին, և ամեն պէտք եղած տեղերը երկու մեզր բարձրութեամբ և վեց թանձրութեամբ թումբերով ամրացած՝ և գետին անկողինը որոշած է: Երեսնի չափ ջրանցք շինել տուած է 2,137 հազարամեզր երկայնութեամբ, տարին 355 ֆէլլահ աշխատեցնելով. իսկ ատոնց համար չինել տուած տեսակ տեսակ կամուրջներ անթիւ են:

Յորենը որ Մահմուտիէ ջրանցքով Գահիրէէն Աղեքսանդրիա կ'անցընէին անկէ ալ տէրութենէն դուրս, հիմա

¹ École centrale.

² École polytechnique.



Հարուստ և աղքատ կին Գահիրայ .

Ջրանցքէն մինչև նաւահանգիստ շոգե-
կառօք կը տանին՝ քաղքին մէջէն ան-
ցընելով։ Ուրիշ երկաթուղի մ'ալ Տեւ-
դայի մէկ մասը կը կտրէ կ'անցնի . բայց
դիտելու արժան է որ շոգեկառաց
յաճախութիւնը շահաւոր չկրնար ըլ-
լալ Եգիպտոսի համար՝ մինչդեռ վառե-
լիքը քիչ է և նաւարկութեան ալ յար-
մար է։ Ամենուն ծանօթ է Եգիպտոսի

ծովեզերաց ցածութիւնը, և անոր փա-
սակար հետեւանքները, մանաւանդ ա-
լէկոծութեան ատեն՝ նաւուց նկատ-
մամբ . 'ի դարման ասոնց Մէհէմէտ Ս-
լին բարձրացրնել տուաւ Ռաս-իւլ-Ռին
հրուանդանին ծայրը այն վաթսունը-
հինգ մեդր բարձրութեամբ աշտարակը
որ իր առաջնակարգեան լուսովը ութ
փարսախ տեղ կը լուսաւորէ։ Դարձեալ

այս փոխարքային ատեն սկսան շոգե-
նաւերը Եգիպտոսի մէջ, և կազով լու-
սաւորութիւնը: Իսկ թէ երկրին ինչ
կերպարանք տուաւ զեղեցիկ անկա-
գործութիւններով թիթենւոյ (վասն զի
չերամի որդը հոն տեղացի փոխուած
է), ձիթենւոյ, խաչխաչի (որուն ափիո-
նը Սայիտի ափին անուամբ միշտ նշա-
նաւոր եղած է), բամբակի և ուրիշ ա-
սոնց նման բոյսերու, երկար գրուածի
արժանի էր. այսչափս միայն ըսենք որ
1,500 պարտիզպան բերել տուաւ Յու-
նաստանէն, և Պէտէվիի արաբացւոց
վրայ գլուխ դրած՝ սկսաւ իր կարեոր
գործոյն ձեռք զարնել:

Եգիպտոսի վաճառոց մէջ անուանի
է՝ Պալլասի (որ վերին Եգիպտոսի մէջ
կ'իյնայ) Ժալ հողէն շինուած սափոր-
ները, զորոնք եւրոպացիք հողին անու-
նէն Ժար կ'անուանեն. յատկութիւնն
է ջուրը դուրս քրտնցնելով աւելի
պայծառ և զով ընել. հողին տեսակը
աճառուտ, բարակ և կրախառն է, զոր
քաղաքին մօտ անապատի մը մէջէն
կ'անեն. շաղուելէն և ձևացնելէն ետ-
քը յարդի բոցին տաքութիւնն անգամ
բաւական է զայն եփելու համար. շի-
նողներուն ծախքը ամենաբիւշ, իսկ գը-
նողներունը բոտ բաւականին. քիչ շատ
այսպիսի անօթոյ շինութիւնը բոլոր Ե-
գիպտոսի քաղաքաց կրնանք սեպհա-
կանել, վասն զի Նիլոսի առատութիւնն
իրենց Նիլթ կը պատրաստէ: Սիութեն
մինչև Աղեքսանդրիա կտաւագործու-
թիւնն բանուկ է: Էսենէն՝ առատութե-
նդեղէն, բամբակ, կտաւ և տեսակ տե-
սակ եղեր դուրս կ'ելլէ. և կը մտնէ բը-
րինձ, Տելլայի աղ, օճառ, Ասորոց մե-
տաքսեղէն, բամբակեղէն և կերպաս-
ներ: Եւրոպայէն ալ երկաթ, կապար,
պղինձ, գորգք և կուլը. Պիրքէդ-էլ-
Քարուն լճին եզերքները (Մերիմեան
լիճ) բուսած եղեգներով փախթ կը
շինեն. ուսկից են իրենց անկողիններն
ալ, բարձերն ալ, սեղանի ծածկոյթ-
ներն ալ: Մէտինէդ-իւլ-Փայում քա-
ղաքէն (որ համանուն գաւառին մէջ
լճին հարաւային կողմը կ'իյնայ), վար-

դի ջուր կը հանեն. վերին Եգիպտոսի
մէջ ալ շաքար և զինի: Աւշակի աղը՝
Գահիրէի և Տելլայի մէջ միայն կը պատ-
րաստուի. ութը տասը գործարան ունի
աղորակ շինելու համար, մեծ երկաթի
ձուլարան մը՝ ի Պուլպը՝ գործարաննե-
րու և նաւերու պիտոյից համար: և գոր-
ծարաններ կրելի զինուոց համար՝ Գաղ-
ղիացւոց առաջնորդութեան տակ. բայց
ընդհանրապէս խօսելով եգիպտական
ճարտարութիւնը բաղդատելով եւրո-
պականին հետ դեռ շատ յետամնաց է,
և կը մնայ այն վիճակին մէջ քանի որ
առանձնականաց շահը անոր զարգա-
ցումը չկրնար երազել, քանի որ երկրա-
գործն ալ, վաճառականն և գործատէրն
ալ միայն քիչերն ըլլան. տէրութեան
գործատուներէն ելած վաճառքները
բոլորն ալ դրոշմած են. իսկ անոնք որ
չեն տէրութեան՝ արգիւտած են: Շու-
գիով ջաղացք չեն կրնար գործածել,
վասն զի վառելիք բաւական չունի և ոչ
ալ ջուրի թափուածք և կամ՝ երազըն-
թաց գետեր, որոնց ուժը կարենայ պի-
տանի ընել. իսկ կենդանւոյ ուժը գոր-
ծածելը շահաւոր չըլլալէն զատ, անբա-
ւական է ներկայ ժամանակիս մեծա-
մեծ գործողութեանց համար: Ասոնց-
մով կարծուի թէ որչափ ալ ծաղկի Ե-
գիպտոս, սահման մը և հորիզոն մը պի-
տի ունենայ քաղաքականութեան զար-
գացմանը, և պիտի չկարենայ առաջին
կրթեալ ազգաց հաւասարակշիռ դալ,
բայց եթէ վերցուին վերը ըսած ար-
գելքները:

Եգիպտոսի վաճառականութե՛ դըռ-
ներն երկու տեսակ են, ծովային և ցա-
մաքային. ծովայինը թէպէտ և ուշ բա-
ցուած՝ բայց աւելի շահաբեր է և միան-
գամայն ցամաքայինոյն իյնալուն պատ-
ճառ: Գամաքայինը չըջակայ ազգերէն
եկած կարաւաններուն ձեռքով կ'ըլ-
լայ: Ապիսսինիոյ կարաւանը կու գայ
մինչև Էսենէ և կը բերէ փղոսկր, ջայ-
լեման փետուրներ, խէժի տեսակներ,
և գերիներ. ի դարձին կը հանէ դուրս

վենետիկոյ ուլունք, զգեստեղէն, բամբակէ և կտաւէ լաթեր, կապուտակ շաւեր և դիպակներ: — Ապուրտէս և Պիքարիս ֆեղերը, որ Նիլոսի և Կարմիր ծովուն մէջ կը բնակին, կ'իջնան Եանէ. կը բերեն գերի, ուղտ, ակասիա ծառի խէժ¹. ածուխ՝ որ Նոյն ծառին փայտէն կը շինեն. կը տանին մետաղներ, գործիներ և ընդեղէն: Ասորուց կարաւանը կը բերէ մետաքս, ծխախոտ, օճառ. Հընդկաստանի, Պարսկաստանի, Դամասկոսի և Բերիոյ դիպակներ, Երուսաղէմէ և Բեթղէհէմէ մատուցներ և վարդաբաններ. և կը տանի բրինձ, քաֆէ, գործածական բաներ և ստակ: Մաղբըլէն եկածը կը կտրէ բովանդակ Բարբարոսաց Յը և կը բերէ ծածկոցներ, ճերմակ կտաւէ մեկնոցներ, Դունուզ շինուած գլխարկներ, չորի, չայլեման փետուր, քրքում, վարդի եղ, և ուրիշ արժէք ունեցող նիւթեր: Սիւէզի և Կարաւաններուն բերած վաճառքներն են Մաքայի քաֆէ, խէժի տեսակներ, ծխանելիք, մարգրիտ, ակունք, Հնդկաստանի բեհեզ, մետաքսեղէն, ֆաշմիրի ցփսի և դիպակներ. գլխաւորները միայն յիշատակեցինք, զանց առնելով աննշաններ: Ծովով Անատոլիէն, Կոստանդնուպօլսէն և Արշիպեղագոսի կղզիներէն մեծ քանակութեամբ փայտ կ'ամբարէ շինութեան և վառելու համար. Արշիպեղագոսէն հազարաւոր կենդինար չամիչ, ուսկից կը շինեն օղի. չոր պտուղ, տաճկի ծխախոտ, խէժ, ձէթ, օճառ, կուպր, ոտից գորգեր, հարուստ հիւսուածքներ, և մուշտակներ. իսկ՝ իր երկրէն կը դրէ Մաքայի քաֆէ, բրինձ, ցորեան, և ուրիշ ընդեղէն, և մանչ ու աղջիկ գերիներ:

Վերջապէս համառօտելով խօսքերնիս, բոլոր այս նոր վաճառականութե և ընդհանուր զարգացման ոգին կըրնանք ըսել որ մէկ մտաց հանճարոյն գեղեցիկ արդիւնքն է. այն նախնի Եգիպտոսը որ իր ամենէն ծաղկեալ և բարգաւաճ ժամանակ անգամ հազիւ 14 մի-

լիոն մարդ կը սնուցանէր, և յետոտըն կոխ ըլլալու 'ի Հռովմայեցւոց, յԱրաբացւոց, Թիւրքմէներէն և ասոնցմէ ետքն ալ Մէմլուքներէն, մինչդեռ ոչ որ անոր վերածնունդը յուսար, յուսաց Մէհմէմէտ Ալին, և զԵգիպտոս նորոգելու ձեռք գարկաւ. փոխաբայ երկրին, բայց աւելի թագաւորաբար վարուեցաւ, մտածութիւնը ծափածայն գովութեամբ հոչակուեցաւ, և անոր գործադրութիւնը պսակուեցաւ իրեն և ապագայից օրերուն մէջ: Այս բանիս՝ կըրնանք ըսել իրաւացի ազգային պարծանք մը, որ թէ Մէհմէմէտ Ալիի և թէ իր յաջորդաց՝ գործակից եղան ճարտար և նրբամիտ հայ պաշտօնեայք, ինչպէս Պօղոս Պէյ Եուսուֆեան, Արթին Պէյ, և հիմակուան գործունեայ, զգօն և բարեբար պաշտօնեայն Նուպար փաշայ:

ԳԻՇՆԻՐ

2 Խորդ վըսեմ, սիլ գիշեր, է ինձ բարբառդ աղդէւոր,
Մինչ միայնիկ, եւ քո պէս խաղաղաւէտ մըտախորհ,
2 ակն իմ յառեալ 'ի յաստեղս, որ զքոյդ պըճնէն պատմուճան,
Շուրջ գեգերիմ՝ յանգորրու ընդ քո ստուերօք նուիրական:

ՏԵՏՏՈՒՅԵՍ

Արդեօք կը գտնուին մարդիկ, որոնց աստեղազարդ գիշերաց տեսարանը գեղեցիկ խորհրդածութեան մը նիւթ չերևայ: Կան այնպիսիներ, որոնք մէյ մը կանկ առած չելլեն 'ի զնին մեր գլխուն վրայ տարածուած ամբաւ լուսափայլ աշխարհաց, ու փնտռած չըլլան արարչագործութեան մեծ գաղանկը: Գիշերուան միայնութեան ժամերը իրաւցընէ մեր ամենէն գեղեցիկ ժամերն են, յորս կրնանք մտերիմ ընտանութիւն մը ընել ընդարձակ և անսահման բնութեան հետ: Հազիւ թէ մթութեան քողը տիեզերաց վրայ պատել կ'սկսի և ահա ցորեկուան լոյսը կ'սկսի խաւարիլ:

¹ Gumma acacia.